

մ' է. այժմ 16,000 հոգի է բաղկացնել թէև երբեմն խիստ բազմաթիւ էին, Սակայն թուական տկարութիւնը ներքին զօրութեամբ կը հաստատուէր այնու զի գրեթէ բոլոր Բուլղարները հաստատուած էին ճարտար ու խելացի անձնորութիւնը են: Արեւմտեան վիճարանութեամբ ժամագծաւ ըլլալու տեղ գործած և դիւր զբաւած են: Յոյն ու չապլուսթիւնը կ'ատեն, պարզութիւն կը սիրեն: Ժամանակաւ իրենց յատուկ պարզ համազգեստ ունէին որ այժմ կորսուելու վրայ է: Ասոնք իրարու յոգնակի չեն գործածեր Բուռն կըսեն և ոչ երբէք Բուռն: Թագաւորին առջև ալ ելլեն Գոյ կըսեն: Իրենց նշանաբանն է «խաղաղութիւն» և պատերազմի ոգով չափ հակառակ են: Զինուոր չեն դրուիր և ատոր համար շատ հալածանք քաշած են: Գերեզմարութեան ոգելից ըմպելիաց հակառակ են: Ժողովրդեան աճէր գասակարգին մէջ յարգելի են: Թուրքներն շատցնելու մարդ որսալու փափաք չունին:—Արեւմտեանի գաղութը բոլոր խորհուրդները կը մերժեն: Միւս բողոքական եկեղեցեաց 2 խորհուրդներն, մկրտութիւնը և հաղորդութիւնն ալ կը մերժեն: Թաշակաւոր պաշտօնէութիւն չունին: ամենայն ինչ ձրի է և հոգոյն ազդեցութեամբ մէկը կը քարոզէ: աստուածաբանական ուսումն և դպրոց ալ չունին: Երբ աղօթատեղին հաւաքուին լուս ու մուշ կը նստին խոր լուսութեան և մառնութեան մէջ թաղուած: մինչև որ մէկը հոգիէն զրգեալ բան մը ըսէ կամ աղօթէ: երբեմն առանց մէկը բան մ' ըսելու կ'ելլեն կ'երթան: երգիչ չունին: ոչ ալ դաշնակ իրենց տուները:

Ահա ասոնք են ազատ եկեղեցեաց գլխաւոր ծիւղերը: ուրիշ մանր մունր ծիւղերը որ շատ են զանց կընեմ:

Կոտ ժամանակներս կարօտութիւն զգացուած է այս զանազան ծիւղերու մէջ աւելի սերտ յարաբերութիւն և մինչև իսկ միութիւն մը հաստատուել: քանի որ վարդապետական մեծ տարբերութիւն չունին որպէս զի կարենան աւելի զօրեղ ազդեցութիւն մը գործել կրօնական և մինչև իսկ քաղաքական գործոց մէջ: Զինք վից տարի է ի վեր սկսուած այդ միութիւն տնօր իրադրոճեալ է ազատ եկեղեցեաց ժողովի անուամբ:

Պէտք է դիտել որ բազմաթիւ իրենց թուոյն և հարստութեան այս ազատ եկեղեցիք աւելի առատաձեւ են և գործունեայ են: Իրենց միախնայական ընկերութեանց ցանցերով պատած են բոլոր հեթանոս աշխարհը: Եպիսկոպոսականք ծանր են և անտարբերութեամբ կը շարժին: մինչև ազատ եկեղեցիք համակիր են ամեն հալածելոց, տառապելոց: Անգղիայէն Հոյստան զրկուած նըպաստից մեծազոյն մասն անոնցմէ ելած է: Երբ եպիսկոպոսականներէն հաղիւ թէ հոս հոն ձայն

մը կը բարձրանար (թէև պատուաւոր ձայն) անգին ազատ եկեղեցեաց գրեթէ ամենքին բարձրաձայն բողոքեցին մեզ եղած անիրաւութեանց դէմ: Փրկութեան բանակն իսկ իր ապաստանարան ներք բացաւ հայ պանդուխտներուն համար և Բուլղարներ յատուկ քովիմէ մը կազմեցին Հայոց սպանելու որ դեռ կը շարունակէ իր գործ: Ազատ եկեղեցիք իրենց աղմուկով ու բողոքներով ստիպեցին Անգլիկականներն ալ Հայոց միայ խորհիլ խօսիլ և բիշ մ' ալ գործել գոնէ առ ամօթոյ: Առանց ազա եկեղեցեաց հայկական խնդիր նշել ժողովրդականութիւնը պիտի չունենար Անգղիոյ մէջ ինչ որ ունեցաւ: Եւ սակայն ստիպեալ ենք ըսել ինչ ոգոս ունեցաւ այդ ամենը:

ՕՏԸՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ:

ՕՐԹՈԳՌԲՍ ԵԿԵՂԵՑԻ:

Ռուսաստանի մի քանի տեղերից հետաքրքրական տեղեկութիւններ են հաղորդում այն առաւելութիւնների մասին որ ներկայացնում են կանանց վանքերը այս մարզոց վանքերի հետ համեմատած: Մինչ վերջիններս դնալով դատարկութիւն են և աղքատացնում առաջիններն ընդհանրապէս ծաղկում են և վանք մասնէլ ցանկացողների թիւն այնչափ շատ է որ դժուար է բուրքին անդ անել: Այդպէս օր. Պիդուկայում վերջին ժամանակ երկու աղամարդոց վանքեր փոխել դարձրել են կանանց համար և երբորդ փոխելու վրայ են: Գոյում են մի քանի վանքերում տիրող աշխատատիրութիւնն ու կարգապահութիւնը: Ռուսաց վանքերում առհասարակ կրօնաւորները բաժանում են լինում մի քանի դասերի որոնք հնազանդորին (послушание) են կոչուում և իւրաքանչիւրը մի որոշ գործ է ունենում կատարելու: Կանանց մի դասը ծառայում է եկեղեցում՝ երգեցողութեան, ընթերցմունքի մասնակցելով կամ մոմ ծախելով և դանձանակաւորում ժողովելով: միւսը պարտաւոր է ձեռագործներով՝ գլխաւորապէս ոսկեթել և արծաթեթել աւելիապարծութեամբ, երբորդն աշխատում է բանջարանոցներում կամ պարսեղներում եւն: Կուսանոցները Ռուսաստանում տանը մնացած անգործ աղջկաներին ի մի ժողովելով գործի և քրիստոնէական կենցաղավարութեան վարժեցնելով՝ նպաստում են մասամբ կոյմնակի կերպիւ կանանց խնդրի լուծմանը: Այս տեսակէտով նկարագրում է Новое Время-ի թղթակիցը ամենանշանաւոր կուսանոցներից մէկը՝ ՍԼ. Երաֆի-

մօ—Գլխիկէն վանքը Նիժնիյ—Նովոգորոդի նահանգում, որ 900-ից առէլի կանանց պատապարտւած է իւր յարկի տակ և քոլորին իրենց հաղմանց և ընդունակութեանց համապատասխան պարապմունքներ տալին:

— Ռուսաց թեմերի մեծ մասում ջանքեր են դրած դնում այժմ եկեղեցական գործածութեան վերաբերեալ իրերի վաճառումը կենտրոնացնել եկեղեցական հաստատութեանց ձեռքում և շատ թեմերում արդէն այդպիսի ջանքերն աչքի ընկնող արդիւնք են ցոյց տուել: Այդպէս՝ Պոդոլի թեմական մոմի գործարարը 1898 թ.-ին ունեցել է 57,502 ռ. դուս շահ 16,163 ռ. առէլի քան նախընթաց տարին: Մի քանի թեմական վարչութիւններ վերջին ժամանակ խիստ վճիռներ են դրել և միջոցներ ձեռք առել, որ իրենց թեմերում բոլոր քահանաներն ու երեսփոխանները պարտաւորուած լինին միայն թեմական գործարանից մօմ գնելու և ամէն կերպ արգելք լինին օտարների վաճառահանութեան: Այլև շատերը պարտաւորեցնում են մօմի գործարանից կամ եկեղեցական հաշուով բացում յատուկ կենտրոնական վաճառատներից գնել եկեղեցւոյ ձէթը, խոնկը, գինին: Աւելորդ է ասել, թէ եկեղեցւոյ համար որչափ ընդարձակ եկամուտներ և աղբիւր կարող են դառնալ այս ձեռնարկութիւնները:

— Գեղեցիկ և օրինակելի գործ է սկսել Պիեռլի մօտ գանուող Ֆէոֆանիյ անպատի միաբաններից մէկը: Իւրաքանչիւր տարի, մանաւանդ ամառուայ սկիզբներում՝ Ռուսաստանի բոլոր կողմերից ուխտաւորները ահագին բազմութիւն է գիմում Պիեռլ, երկրպագութիւն մատուցանելու նորա բազմութիւն որբութիւններին: Այդ բազմութեան դռնէ մի մասին հոգեւոր սնունդ մատակարարելու նպատակով՝ յիշեալ կրօնաւորը մի անտակ ժողովրդական ընթերցանութիւն է կազմակերպել: Իւր վանքի բակում հասարակ սեղանի առաջ նստում է նա և կրօնական—բարոյական գրքոյկներ կարդում, իսկ ուխտաւորները բակում լեցուած ամենայն ուշադրութեամբ լսում են նորան երկար ժամերով: Ականատեսի նկարագրելով ընթերցանութեան փափաղն այնչափ մեծ է այդ հասարակ ամբոխի մէջ, որ օր ու գիշեր բակից չէր հեռանայ, եթէ ընթերցանութիւնն անընդհատ շարունակուէր:

— Ռուսաստանի զանազան տեղերում արագ կերպով բազմանում են «Խաչվառակիները» ընկերութիւններ, որոնց նպատակն է ըստ կարելւոյն մեծ շուք տալ եկեղեցական թափօրներին:

— Церк. Вѣстникъ թերթը նկարագրելով թէ ինչպէս հեշտութեամբ և յաճախ կողմնակի

զրգիչները շնորհիւ հրեաները ռուսացականութիւն են ընդունում, եկեղեցական վարչութեանց ուշադրութիւնն են հրաւիրում, որպէս զի թոյլ չտրուի քահանաներին միբաւել նոցա, մինչև որ կանոնաւորապէս նախապատրաստուած և քրիստոնէական դասնութիւնն ու ռուսաց եկեղեցւոյ վարդապետութիւնը լաւ ուսած չլինին: Թողուածի հեղինակը հեռաւոր վտանգ է տեսնում այդ բանի մէջ, որ առերես քրիստոնեայ դարձած և հոգւով հրեայ մնացած անհատներ բազմանալով և գուցէ ամանք եկեղեցական աստիճանի իսկ հասնելով և աղդեցութիւն գործելով իրենց շրջապատողների վերայ՝ այնպիսի երևոյթներ յառաջ բերեն, ինչպիսին Սուբբոանիկների աղանդն է:

— Պարսկաստան ուղարկուած Ռուսաց առաքելութիւնը, որ պէտք է իրականացնէր և գլուխ հանէր նետորականների օրթոդոքս եկեղեցւոյ հետ միացման գործը՝ տեղեկութիւններին նայելով, մեծ յաջողութիւն է ունեցել: Ասորի աղդարնակութեան հաղիւ մի վեցերորդ մասը ատում են, հաւատարիմ է իւր հին դասնութեան. քչերն են նոյնպէս, որ ամբրիկական երկցական եկեղեցւոյ առաքելութեան կողմնակից են մնում. մնացած մեծագոյն մասը գիմում է ուրախութեամբ Ռուսաց եկեղեցւոյ գրկը և մի քանի ամիս յետոյ միացումը կատարուած իրողութիւն կլինի: Կառաքելութիւն կայ ռուսական գրամով գնել Ռոմիոյ այն պողոտէտ այգեշատ հարթութիւնը, որի վերայ ասորիներն են ընակուում, և մահմեդականների ծանր, ամէն հոգեւոր ու բարոյական կեանք խեղդող լծի տակից ազատել այդ խեղճերին:—Շատ խեղճ է, ինչպէս նրկարագրում են, 300 հոգու չափ մի խումբ նախկին մահմեդականների վիճակն Ատրպատականում, որոնք այժմ քրիստոնէութիւն են ընդունել: Քանի որ իւրաքանչիւր մահմեդական իւր օրէնքով աղատ է վարուելու նոցա հետ ինչպէս ուղենայ՝ խլելու նոցա ունեցուածքը, մինչև իսկ կեանքը, հարկաւ նոքա իրենց շրջապատողների ողորմելի սարուկները պէտք է դարձած լինին: Այդ սարկութիւնից աղատուելու համար նոքա գիմել են Ռուսաց կառավարութեան և ընտկութեան տեղ խեղբել սահմանի այս կողմում:

Օգոստոս 24 ին վախճանուեցաւ 101 տարեկան հասակում Աղէքսանդրիոյ Սովրոնիոս պատրիարքը: Հանգուցեալը ծնուած էր 1798 թ.-ին Վ. Պոլսում և ուրեմն մի ամբողջ դարի սահման տեսել էր բաց աչքով: Կրօնաւորութիւն ընդունել էր նա 1820 թ.-ին և Քիոս կղզու մեծապալկա ընտրուել 1839 թ.-ին. եղել էր սպա նաև Ամասիոյ մեծապալկա և 1863-ից մինչև 1866

Թ. ը նստել Կ. Պոլսոյ անկզ. պատրիարքութեան
աթոռի վերայ, 1870 թ. ին նա հրաւիրուեցաւ
Աղէքսանդրիոյ պատրիարք լինելու և մնաց այդ
աթոռի վերայ մինչև իւր մահը, Մինչև վերջին ժա-
մանակի իւր պառամեալ հասակին չնայած, պատ-
կառելի ծերունին անձամբ դրաղութիւն էր պատ-
րիարքութեան գործերով և հայրական խնամածու-
թեամբ ու սիրով հոգ տանում էր հօտի հոգեւոր
պետայրների մասին, առանց կորցնելու եռանդն
ու հոգւոյ արիւթ թիւնը:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՏԻՆԵՐ.

Փորձանկար:

Օգոստոս 13-ին վախճանել է մեր ժամա-
նակի ամենանշանաւոր աստուածաբաններից մե-
կը՝ Տիւրքիզէնի համալսարանի ուսուցչապետ և
կանցէլէր զբ. Կարլ Վալցգեկիէր: Հանգուցեալը,
որ արդէն 77 տարեկան պատկառելի հասակ ու-
նէր՝ մեծ ծառայութիւն է մատուցել մանաւանդ
քրիստոնէութեան առաջին երկու դարերի պատ-
մութեան ուսումնասիրութեան իւր «Յետառա-
քեւական շրջան» անուն գրքով, որ տասնեակ
աւրիններ է վեր իւրաքանչիւր գերմանական աս-
տուածաբանութեան ուսանողի ձեռք է արուում
և մնում է նորա ուսուցիչը նոյն իսկ գիտութեան
ամբիոնի վերայ բարձրանալուց յետոյ: Աւելի ևս
մեծ է նորա ձեռքով եղած նոր Կապիտանի
թարգմանութեան արժէքը, որ ոչ միայն բազ-
մաթիւ գերմանական թարգմանութիւնների, այլ
և դուք էւրոպական բոլոր լեզուներով եղած-
ների մէջ լատիներէն է և ճշապոյնը. քննադա-
տական հայեացքով ու Փիլք կարգացող համար
կէս մեկնութիւն է այն գրեթէ, և անհրաժեշտ
ձեռնարկ է դարձել բոլոր աստուածաբանների
համար: Իրեւ եկեղեցւոյ մասնաւորապէս դա-
ւանանքների պատմութեան ուսուցիչ ևս Վալց-
գեկիէր մեծ անուն ունէր և բազմաթիւ աշա-
կերաներ է տուել գիտութեան կաճառին: Ով
նորա արաւայայտելի ղեկըր տեսել ու կարուկի
իւրաքանչիւր բառ ձեռք ու կշռած, խօսքը մի
անգամ լսել է՝ ամբողջ կեանքում նորան մոռա-
նալ չի կարող:

— Առպարիկից հեռացել է մի ուրիշ հա-
ւասարակալի մեծ հաշտի ունեցող աստուածա-
բան: Բերլինի համալսարանի նոր Կապիտանի
ուսուցչապետ Բերնհարդ Վալց, որ աստուածա-
բանական աշխարհում ամենից բարձր պաշտօնն
ունէր՝ ներկայացուցիչ էր Նախարարութեան ա-
ռաջ աստուածաբանական բաժիններին վերաբեր-
եալ գործոց համար, Այդ պաշտօնից հրաժարա-
կան է տուել նա և հրաժարականն ընդունուել
է:

Անգլիա:

Միտական վէճի նկատմամբ Անգլիոյ երկու
արքեպիսկոպոսները նորերս մի վճիռ են արձա-
կել, որին մեծ կարեւորութիւն է արուում, Խըն-
դիրը վերաբերում է խունկի և մոմի դորձածու-
թեան, որի համար երկուր վէճեր և պառակտում-
ներ են եղել Անգլիկան եկեղեցւոյ մէջ. այժմ
արքեպիսկոպոսները յայտարարում են, որ թէ-
պէտ նորա խունկը և մոմը եկեղեցւոյ սրբութեան
անպատշաճ իրեր չեն համարում, բայց նոցա
դորձածութիւնը հակառակ են գտնում արքե-
օրէնքների: Հարց է այժմ, թէ արդեօք խիստ
ծիսականները որչափ արամազիր կգտնուին հա-
մակերպելու իրենց եկեղեցւոյ հոգեւոր պետերի ու
բողման: Հատ աեղեցից արդէն դարձացման և հաշ-
կառակութեան ձայներ են լսուում: Անգլիկան
բարձր եկեղեցւոյ պատկանողներն առանձին նշա-
նակութիւն են տալիս այսպիսի արտաքին կար-
գերին և սովորութիւններին, որովհետեւ նոցա մէջ
տեսնում են ընդհանրական եկեղեցւոյ հետ կա-
պակցութեան արտայայտիչ նշաններ, իսկ այդ
կապակցութիւնը՝ կաթոլիկ եկեղեցւոյ անդամ
համարուելը, ամենամեծ նշանակութիւն ունի նո-
ցա համար, այնպէս որ նորա ծաղրով և արհա-
մարհանքով են վերաբերուում դէպի կաթոլիկ ե-
կեղեցւոյց բաժանուելու շարժումը Ֆրանսիայում
և այլուր, և առիթ չեն փախցնում իրենց յար-
գանքը ցոյց տալու կաթոլիկ կամ արեւելեան ե-
կեղեցիներին և նոցա ներկայացուցիչներին:

— Նկատուած է, որ հոգեւորական կոչման
ձգտողների թիւն զգալի կերպով պակասում է
Անգլիկան եկեղեցւոյ մէջ: Դորա գլխաւոր պատ-
ճառը համարուում է այն անապահով վիճակը,
որ սպասում է սովորաբար ստորին կարգի հո-
գեւորականներին: Մինչդեռ եպիսկոպոսները հրա-
կայական եկամուտների աէր են (Կենտրոնը
արքեպիսկոպոսն ստանում է 150,000 բուրլ,
Լանդանի եպիսկոպոսը 100,000, ամենափոքր ուս-
ձիկը եպիսկոպոսի համար 15—16,000 է, փա-
փուկ ուսձիկներ են ստանում նաեւ առաքելիցնե-
րը),—սովորական երէցները տասնեակ տարիներ
ամենատուր միջոցներով պէտք է բաւականանան,
անկարող լինելով յաճախ նոյն իսկ իրենց ընդու-
նակութիւնները շնորհիւ այդ նեղ վիճակից երբ
և իցէ ելնելու, որովհետեւ բարձր պաշտօն կամ
ոսձիկ ձեռք բերելու համար աւելի մեծերի հո-
վանաւորութիւն պէտք է, Ոմանք եկեղեցւոյ
պաշտօնեաների թիւն աւելացնելու համար ա-
ռաջարկում են լրջօրէն՝ կուսակրօնութիւն մշտ-
ցնել կամ ուսումնական պատրաստութեան պա-
հանք իջնցնել, բայց հարկաւ ուղղամիտ միջոցներ
չեն գործ և եկեղեցականներին նիւթական վեճա-
կը կանոնաւորելու և բարեփոխելու պահանջը դը-

նախով աւելի և աւելի ստիպողական պէտք է դառնայ:


Զուիցեցիւն:

Բաղէլի միսիոնարական ընկերութիւնը, որ այնպիսի ակտիւ յիշատակներ է թողել մեր հայրենիքում՝ իւր տարեկան տոնը կատարել է յունիս 26—30-ին: և այդ միջոցին կարգացուած հաշիւները երևում է, որ վերջին ժամանակ նա շատ յաջող գործունէութիւն է ունեցել հեթանոսների մէջ և նորա գործունէութիւնը քանի գնում ընդարձակուում է: 1898 թ.-ին նա մի քանի է նշգրտատանում, Զինատանում և Աֆրիկայում 2670 հեթանոսներ, ունեցել է ընդամենը 38,637 բրիտանէութիւն ընդունած անդամներ, 18,627 մանուկների կրթութիւն է տուել իւր դպրոցներում: Համեմատութեամբ 1878 և 1888 թ.-ներին՝ նորա ուժերը այս քան կամ ատարաւոր ընթացքում գնալով մեծացել են և արդիւնքը համապատասխան կերպով բազմացել է: 1878 թ.-ին նա ունէր 33 գլխաւոր և 123 երկրորդական կենդրոններ, որոնց մէջ գործում էին 106 եւրոպացի և 279 տեղացի միսիոնարներ. այժմ ունի 56 գլխաւոր և 426 երկրորդական կենդրոններ, 181 եւրոպացի և 984 տեղական քորժիկներով. իսկ բրիտանէութիւն ընդունածների և ուսանող մանուկների թիւը եռապատուել ու քառապատուել է: Ըստ այնմ և ծախքը, որ առաջ 742,000 մարկ էր, այժմ դարձել է 1,211,000 մարկ: Ամէնից աւելի աչքի է ընկնում Զինատանում եղած յառաջագիմութիւնը, որ երկար ժամանակ ամենազգուար մատակցին էր համարուում միսիոնի համար. իսկ այժմ մի տարուայ մէջ 5600 հաւատացողների վերայ 1020 աւելացել է: Դորա պատճառն է գլխաւորապէս երկրի այժմեան քաղաքական խզճուի վիճակը, որ մաքերի սաստիկ յուզում է յառաջ բերել աղղարանկութեան մէջ և կորցնել տուել հաւաքող գէպի սեփական կառավարութիւնն ուստուածները: Բրիտանէութիւն ընդունել կամեցողների թիւը խիտ մեծ է, ըայց բողոքական միսիոնարները զուգանում են անպատրաստ խմբեր միլեակուց, մինչ կաթոլիկները ոչ ոքի չեն մերժում. ուստի և նոցա արտաքին յաջողութիւնն աւելի մեծ է. մօտ միջոցներս Իէն կոչուած ամբողջ ցեղը կաթոլիկութիւն է ընդունել:

Ներսիս աշխարհ:

Հատ հետաքրքրական է Ճապոնական բուդդայականների գլխաւոր քրմապետի բոլոր հաստացեալներին՝ ուղղած մի նոր շրջաբերականը, որով յորդորում է յարգանքով վերաբերուել դէպի օտար կրօնները: Մեր նոր սահմանադրութիւնը,

նր, ասում է նա, տուել է երկրի բոլոր ընտիկներին՝ ճապոնացի լինեն թէ օտարական, խղճի անսահման ազատութիւն, և ոչ մի ճապոնացի ինչ կրօնի կուղէ պատկանի, իրաւունք չունի այլևս աւելի մեծ և աւելի լաւ համարելու իրեն, քան ուրիշ որ և է կրօնի հեռեցները. Բւրաքանչիւր ճապոնացի հաւատարարէս պարտաւոր է իւր կայսեր խոստումը կատարել և նորա համաձայն ընթանալ: Մանաւանդ բոլոր բուդդայական քրմերը պարտականութիւն ունին օրինակ լինել հաստացեալներին և յարգանք ու պատիւ ցոյց տալ քրիստոնէայ հաղեւորականներին: Ոչ ոք նոցանից և ոչ մի հաւատացող աշխարհական իրաւունք չունի իւր սեփական հաւատոյ պատուէրները, որոնց նա հարկաւ այտուհետեւ ևս խտուի պէտք է հետեւէ՝ պատճառաւք վերցնելու օտար կրօններ կամ նոցա հեռեցներ չյարգելու համար:—Որչափ յառաջ է գնացել ուրեմն քաղաքակրթութիւնը ճապոնականում, որ այսպիսի ներդրամաւ օղի և ազատ գաղափարներ է ներշնչում մի քրմապետի:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ԼԵՂՈՒՆ ԵՒ ԳԵՂԻ ՍԵՆՉԵՐՉԵԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ.

«Լեզու հուր՝ զարդ անիրսութեան լեզու հաստատեալ է յանդամն մեր, որ զամենայն մարմինն ապականէ»: ասում է Յակոբոս առաքեալը՝ մարդու լեզուն իբրեւ մեծագոյն չարեաց աղբիւր ներկայացնելով: Եւ յիրաւի է թէ մարդիկ աւետարանական խօսքի համաձայն չար են իրենէ (Մատթ. Է. 11), իսկ լեզուն նոցա շար մաքերի եւ շար ցանկութիւնների արտաբերողն է ու թարգմանը՝ հասկանալի պէտք է լինի, որ նորա շարաշար գործածութիւնից մեծ վնասներ կարող են յառաջ գալ: Լեզուն, խօսքը միջին տեղն է բռնում՝ մտքի եւ գործի մէջ. շար միտքը միայն մտածողին է վնասում, շար գործը նաեւ ուրիշին. շար խօսքը թէպէտ միշտ անհրաժեշտաբար զործ չէ դառնում եւ